Արձանագրություն N 2

Երևան քաղաքի «Երևանտրանս» ՓԲԸ-ի տարածքում մեքենաների փակ կայանատեղի նոր մուտքի և պահակակետի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման «ԵՔ-ԳՀԽԾՁԲ-20/133» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Կիրակոսյան /ԳԱՊ/

Հանձնաժողովի անդամներ՝ Ռ. Աբրահամյան, Կ. Անտոնյան,
Հանձնաժողովի քարտուղար՝ Կ. Հարությունյան, Ա. Ղալումյան
Ի. Եղիազարյան

1. Տեղեկություններ «ԵՔ-ԳՀԽԾՁԲ-20/133» ծածկագրով գնման ընթացակարգին հայտերի բացման և գնահատման մասին

(Ա. Կիրակոսյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ **2020 թվականի նոյեմբերի 20-ին, ժամը 12:00-ին**, Երևանի քաղաքապետարան, ք. Երևան Արգիշտի 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. «ԵՔ-ԳՀԽԾՁԲ-20/133» ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

(Ա. Կիրակոսյան)

Գնման ընթացակարգին հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

հ/հ	Մասնակիցների անվանումները
1	ԱՁ Վահրամ Կնյազյան
2	ՄԱՌՔ ՍՊԸ
3	ԻՐՏԻԳ ՍՊԸ
4	Ա/Ձ Մկրտիչ Սուրենի Մելքոնյան

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկի մասին

(Ա. Կիրակոսյան)

3.1 Ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

հ/հ	Գնման առարկայի անվանումը	Նախահաշվային գներ	Մասնակցի անվանումը			
			ԱՁ Վահրամ Կնյազյան	ՄԱՌՔ ՍՊԸ	Ա/Ձ Մկրտիչ Սուրենի Մելքոնյան	ԻՐՏԻԳ ՍՊԸ
			Առանց ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Առանց ԱԱՀ	

1	Երևան քաղաքի «Երևանտրանս» ՓԲԸ-ի տարածքում մեքենաների փակ կայանատեղի նոր մուտքի և պահակակետի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ	**896000**	494000	796000	833280	825000

3.2 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան թվաբանական անճշտություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Տվյալներ բացված հայտում պահանջվող /պարտադիր/ փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Ա. Կիրակոսյան)

4.1 Մասնակիցների կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթներում առկա են հրավերով պահանջվող **/պարտադիր/** բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

5. Տվյալներ հրավերով սահմանված ոչ գնային պայմանների գնահատման չափանիշների մասին

(Ա. Կիրակոսյան)

5.1 Ոչ գնային պայմանների գնահատման չափանիշները.

- **ԱՁ Վահրամ Կնյազյանի** կողմից հայտով ներկայացվել են հրավերով նախատեսված ոչ գնային պայմանների սահմանող բոլոր չափանիշները, սակայն.

1. «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշի մասով բացակայում է մասնագետի անձնագրի և որակավորումը հավաստող փաստաթղթի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները):

2. Հավելված 3-ը /Տեղեկանք մասնակցի կողմից առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին/ էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված չէ:

- **Ա/Ձ Մկրտիչ Սուրենի Մելքոնյանի** կողմից հայտով ներկայացվել են հրավերով նախատեսված ոչ գնային պայմանների սահմանող բոլոր չափանիշները, սակայն «Մասնագիտական փորձառություն» չափանիշի մասով անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք / փաստաթուղթ/ 16.04.2018 թ. կնքված N 01 և 22.02.2017 թ. կնքված N 02 պայմանագրերում նշված շինարարական աշխատանքների գների վերաբերյալ, որ պարզ լինի վերոնշյալ տեխնիկական հսկողության պայմանագրերի գները:

Գնահատող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով ԵՔ-ԳՀԽԾՁԲ-20/133 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 2.4 կետը, որոշեց առաջարկել վերոնշյալ մասնակիցներին մեկ աշխատանքային օրում շտկել առկա անհամապատասխանությունը: Մասնակիցների կողմից անհամապատասխանության չշտկումը չի հանդիսանում հայտերի մերժման հիմք, այլ ազդում է մասնակիցներին տրվող ընդհանուր գնահատականի վրա:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

6. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Կիրակոսյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել **25.11.2020թ. ժամը 11:00-ին**, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ 309 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի Նախագահ՝		Ա. Կիրակոսյան
Անդամներ՝		Ա. Ղալումյան
		Կ. Անտոնյան
		Կ. Հարությունյան
		Ռ. Աբրահամյան
Քարտուղար՝		Ի. Եղիազարյան